

ՍԱՐԳԻՍ ԲԵՐԻԱՏՈՒ «ՅԱՂԱԳՍ ԱՇԽԱՐՀԻ ԵՒ ԱՅԼ ՄԱՍՆԱԽՈՐ ԻՐԱՅ» ԵՐԿԻ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Ն. Վ. ՊԱՐՈՆՅԱՆ

ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի ասիստենտ

Սարգիս Բերիացին ծնվել է 1592 թ. Հալեպ (հիմնականում Բերիա) քաղաքում: Նրա մասին տեղեկություններ է հայտնում Առաքել Դավրիժեցին, որը Բերիացու ժամանակակիցն էր: Թեև Սարգիս Բերիացին իր երկը գրել է 17-րդ դարի կեսերին, սակայն այն գրաբար է: Որքան էլ Բերիացին հարազատ է մնացել դասական հայերենին, նրա երկում կան և՛ միջինհայերենյան, և՛ վաղաշխարհաբարյան բառակազմական իրողություններ:

Բառակազմության հիմնական եղանակները ածանցումն ու բառաբարդումն են: Ըստ կառուցվածքային առանձնահատկությունների՝ բառաբարդմամբ առաջացած բարդությունները լինում են հարադրական կամ վերլուծական և համադրական: Հարադրական բարդություններն էլ լինում են բայական և անվանական: Անվանական հարադրական բարդությունները կազմվում են գոյական, ածական, թվական, մակբայ, եղանակավորող բառ խոսքի մասերի հարադրությամբ: Անվանական հարադրություններն էլ լինում են երկու տեսակ՝ կրկնավոր և բաղիյուսական: Ս. Բերիացին «Յաղագս աշխարհի եւ այլ մասնաւոր իրաց» երկում կրկնավոր բարդություններ գրեթե չի գործածել: Սույն երկում կա երկու կրկնավոր բարդություն՝ արագ արագ (20), դէմ առ դէմ (34): Ըստ խոսքիմասային պատկանելության՝ առաջին բարդության բաղադրիչները ներկայացնում են մակբայ + մակբայ կաղապարը, իսկ երկրորդինը՝ գոյական + գոյական կաղապարը: Նշենք, որ կրկնավոր բարդությունների բաղադրիչների միջև կարող է լինել որևէ մախդիր (դէմ առ դէմ):

Բաղիյուսական են այն հարադրական բարդությունները, որոնց բաղադրիչներն իրար հետ կապվում են ու կամ և շաղկապով: Բերիացու երկում եղած բաղիյուսական բարդությունները հարադրված են միավանկ + ու(և) + միավանկ և միավանկ + ու(և) + երկվանկ, երկվանկ + և + բազմավանկ կաղապարներով. ամ եւ կէսն (24), երեք հարիւր եւ եօթանասուն երկու (26), հարիւր եւ վաթսուն հինգ (32), հնգետասան հազար եւ քսան հինգ (26), չորս հարիւր եւ երեսուն վեց (26), վեց հազար եւ երկոտասան (26), քսան եւ ինն (25), օր եւ կէս (24): Բաղիյուսական բարդություններ են կազմվում տարբեր խոսքի մասերից: Մեր օրինակներից երկուսը կազմված են գոյականների հարադրությամբ՝ գոյական + և + գոյական (ամ և կէսն, օր և կէս), վեցը՝ թվական + և + թվական հարադրությամբ (երեք հարիւր եւ եօթանասուն երկու, հարիւր եւ վաթսուն

հինգ, հնգետասան հազար եւ քսան հինգ, չորս հարիւր եւ երեսուն վեց, վեց հազար եւ երկուտասան, քսան եւ ինն)։

Համադրական բարդությունները լինում են երկու տեսակ՝ իսկական և կցական։ Ըստ բաղադրիչների՝ սերող և բաղադրող հիմքերի կցման եղանակի՝ իսկական բարդությունները կարող են լինել հողակապով և անհողակապ¹։ Սարգիս Բերիացու երկում գործածված են հողակապով հետևյալ բարդությունները՝ անծրեւաբեր (36), աստղալից (22), արագաթռիչ (19), բարեխառն (23), բոլորածել (33), գնդածել (19), երկուտասան (22), զանազան (18), իմաստասէր (32), լայնամիտ (20), լիապես (18), Լուսաբեր (22), լուսափայլ (28), խաւարամած (32), կենդանակերպ (23), կենսատու (19), կիսասառոյց (35), մանրամասն (35), մարդակապիկ (41), մեծամեծ (21), մերձակայ (34), մշտաշարժ (23), նետածիգ (26), նորագիւտ (20), շրջաբերել (23), սպիտակափայլ (33), վնասակար (23), տարրալուծումն (35)։

Ս. Բերիացու երկում գործածված անհողակապ իսկական բարդություններն են Այծեղջիւրն (23), արեգակն (22), արեւելք (20), արեւմուտք (20), Լուսնթագ (22), Խեցգետին (23), կայծակն (27), Ջրիոս (23), վատուժ (23), տիեզերք (20), Փայլակն (34)։ Իսկական բարդությունների անվանական սերող հիքը սովորաբար դրվում է ուղղական հոլովով (օր.՝ հայրապետ, նորաբողբոջ և այլն), իսկ ներքին թեքման մի քանի բառերի դեպքում՝ սեռական-տրական հոլովածնով, ինչպես՝ գարուն-գարնան։ Այս կառույցներում առկա է լինում շեշտից կախված հնչյունափոխություն.

1) է > ի՝ կէս > կիսակառոյց

2) ու > ռ և ու > գրո՝ գունդ > գնդածն, ջուր > Ջրիոս, շուրջ > շրջաբերել

3) ի > ը՝ միշտ > մշտաշարժ

4) ի + ա (հողակապ) > ե՝ բարի > բարեխառն

5) ոյ + ու՝ լոյս > Լուսաբեր, Լուսնթագ, լուսափայլել

6) եա > ե՝ կեանք > կենսատու։

Ըստ խոսքիմասային պատկանելության՝ իսկական բարդությունների սերող և բաղադրող հիմքերը մեր ընտրանքում ներկայացնում են հետևյալ կադապարները.

1) Գոյական + գոյական։ Այս կադապարով կազմվում են գոյական և ածական անունները։ Գոյական բաղադրիչները միմյանց նկատմամբ գտնվում են զխաժորապես հատկացուցիչ — հատկացյալ, երբեմն էլ՝ որոշիչ — որոշյալ շարահյուսական հարաբերության մեջ՝ Այծեղջիւր, արեգակն, գնդածն, Լուսն-

¹ Հմմտ. Ռ. Ղազարյան, Միջին գրական հայերենի բառապաշարը, Ե., 2001, էջ 179։

թագ, Խեցգետին, կայծակն, կենդանակերպ, կիսասառոյց, մարդակապիկ, Փայլակն:

2) Գոյական + բայարմատ (բայահիմք): Այս կաղապարով հիմնականում կազմվում են ածականներ, սակավ են գոյականները, ինչպես՝ անձրեւաբեր, աստղալից, արեւել(ք), արեւմուտ(ք), իմաստասէր, Լուսաբեր, խաւարամած, կենսատու, նետածիգ, Ջրիոս:

3) Ածական + գոյական: Այս կաղապարով ևս հիմնականում կազմվում են ածականներ՝ բաղադրիչների որոշիչ – որոշյալ շարահյուսական հարաբերությամբ՝ լայնամիտ, մանրամասն, սպիտակափայլ, վատուժ, տիեզեր(ք):

4) Ածական + ածական կաղապարի բաղադրիչների միջև գոյություն ունի համազոր հարաբերություն, և ստացվում են ածականներ: Բերիացու երկուն այս կաղապարով կա ընդամենը երկու օրինակ՝ մեծամեծ, բարեխառն:

5) Ածական + բայարմատ (բայահիմք): Այս կաղապարի բաղադրիչները միմյանց նկատմամբ գտնվում են պարագայական հարաբերության մեջ, իսկ ամբողջ բաղադրությունը ածական է՝ ենթակայական և հարակատար դերբայների իմաստով². Նորագիտ, խաւարամած:

6) Դերանուն + գոյական կաղապարով կազմվում են ածականներ. բոլորածն:

7) Մակբայ + բայահիմք՝ արագաթռիչ, մերծակայ, մշտաշարժ: Ս. Բերիացու երկուն մեզ հանդիպած կցական բարդություններն են՝ ամենայն(18), այնժամ (32), այսպէս (21), դեռեւս (48), թեպէտ (29), նոյնպէս (20), որպէս (17), որչափ (19), որքան (28), վեշտասան (21), քանզի (18):

Այսպիսով՝ Ս. Բերիացու «Յաղագս աշխարհի եւ այլ մասնաւոր իրաց» երկուն բարդությունները մոտ 60- ն են: Ամենամեծ թիվ են կազմում համադրական բարդությունները (50 բառ), որոնցից հողակապով իսկական բարդությունները 28-ն են, անհողակապները՝ 11-ը, կցական բարդությունները ևս 11-ն են: Քննվող երկուն հարադրական բարդությունները 10-ն են՝ բոլորն էլ անվանական հարադրություններ: Ջարմանալիորեն բնագրում որևէ բայական հարադրություն գործածված չէ:

Ածանցում: Գրաբարի բառակազմության երկրորդ եղանակը ածանցումն է: Ածանցման հիմնականապաարը մեկ հիմնական և մեկ երկրորդական ձևությի բաղադրությունն է: Խնդրո առարկա երկուն շատ են ածանց + արմատ կառուցվածքով բառերը: Կաղապարներն ավելի հստակ ներկայացնելու համար արմատները կնշանակենք Ա տառով, ածանցները՝ փոքրատառ ա -ով, հողա-

² Տե՛ս Լ. Դոլսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Ե., 1987, էջ 151:

կապը՝ հ տառով, հիմքի հնչյունափոխված տարբերակը՝ վ^h նշանով, իսկ քերականական ձևավորում ունեցող հիմքը՝ վ^թ նշանով:

Այժմ քննենք կառույցներն առանձին-առանձին:

1. ավ - միարմատ մեկ նախածանցով կազմություններ.

ան - անապական (22), անբաժ (45), անկատար (29), անմարմին (25), անմոլոր (23), անհուն (17), անշարժ (22), անշունչ (18), անչափ (32), անտես (21), անփոփոխ (19)

բաղ - բաղադրել (18)

ընդ - ընդդեմ (32), ընդհանուր (42)

հոմ - հոմանուն (17)

ներ - ներհակ (20), ներգործել (38)

տար - տարանջատ (17), տարորոշ (25)

2. աիվ - միարմատ, հոդակապով նախածանցավոր կազմություններ.

ենթ - ենթակայ (27)

համ - համաչափ (31)

յար - յարամնայ (28)

նախ - նախագաղափար (18), նախատիպ (18)

վեր - վերածին (41)

3. ա(աւ) - երկնախածանց միարմատ կազմություններ. այս կառույցներում որպես առաջին բաղադրիչ հանդես է գալիս ան- ժխտական նախածանցը.

ան- + ընդ - ամբողջատ (17)

ան- + տար - անտարակոյս (39)

4. աւկա - այսպիսի կաղապարներում դժվար է պարզել՝ հիմքը կցված է նախածանցի՞ն, թե՞ վերջածանցին.

ան---աբար - անանջատաբար (28)

ան---ար - անմոլար (17)

ան---ութին - անշարժութիւն (17), անկատարութիւն (18)

ան---ապէս - անմարմնապէս (43). ունենք ավ^hա մանրակաղապարը, անշարժապէս (20)

առ---ին - առաջին (34)

առ---(ա)գոյն - առաջագոյն (44), առաւելագոյն(17)

առ---ութիւն - առողջութիւն (47)

բաղ---ութիւն - բաղկացութիւն (18)

հոմ---ութիւն - հոմանունութիւն (17)

ներ---ական - ներգործական (27) ներ---ութիւն - ներգործութիւն (23)

տար---եալ - տարորոշեալ (44)

տար---ութիւն - տարբերութիւն (44)

տ---ութիւն – տգիտութիւն (48). մանրակաղապարն է՝ աւ^հա.

5. ահ(Աա) - այս կաղապարով ունենք 5 օրինակ.

արտ(ա)---ութիւն - արտադրութիւն (37)

պար(ա)---ական – պարագրական (22)

տար(ա)---ութիւն – տարակացութիւն(32)

տրամ(ա)---ական – տրամախոհական (42)

տրամ(ա)---ութիւն – տրամախոհութիւն (40):

Ինչպէս օրինակներից երևում է, քննվող երկուսն զերիշխում են աւ կաղապար ունեցող կառույցները (շուրջ 19 բառ), իսկ աւաւ կաղապարով կազմվել է 5 բառ. 17 բառ էլ ունենք աւա կաղապարով:

Վերջածանցները լինում են երկու տեսակ՝ անվանական և բայական: Անվանական են այն վերջածանցները, որոնք, բառի կամ արմատի վերջում դրվելով, անվանական որևէ խոսքի մասի պատկանող բառեր են կազմում: Իսկ բայական են այն վերջածանցները, որոնք, բառի կամ արմատի վրա դրվելով, կերտում են կամ կազմում են բայեր: Ինչպէս բառերը, այնպէս էլ անվանական ածանցները արտահայտում են տարբեր իմաստներ: Վերջածանցները հիմքին կարող են միանալ հոդակապի օգնությամբ կամ առանց հոդակապի: Մեր ընտրանքում գործածվել են հետևյալ վերջածանցները՝ -աբար, -ագոյն, -ական, -ային, -ապէս, -անակ, -ան, -ակի, -ուած, -արան, -աւոր, -ակ, -եղէն, -ին, -իկ, -երորդ, -րորդ, -ունն, -ութիւն, -պատիկ: Գրաբարի վերջածանցման կաղապարներից ամենագործունը պարզ հիմք + մեկ վերջածանց կաղապարով կազմություններն են: Կան նաև օրինակներ, երբ բառը ստանում է երկուսից երեք վերջածանց: Քննենք Բերիացու երկուսն գործածված վերջածանցման կաղապարները:

1. Աա - միարմատ մեկ վերջածանցով կազմություններ.

-ագոյն - բարեգոյն (25)՝ Ա^հա, բարձրագոյն (29), թանձրագոյն (32), թեթևագոյն (20), լայնագոյն (28), մեծագոյն (32), մթագոյն (33), նրբագոյն (22), պարզագոյն (33), սերտագոյն (22), փոքրագոյն (32) -ուած - ստեղծուած (22), փորուած (41)

-ակ - բոլորակ (28), երևակ (22), տեսակ (35) -ական - անցական (30), բանական (37), բարոյական (46), գոյացական (25), գործնական (47), զգայական (38), իմացական (47)՝ Ա^բա, մարմնական (46)՝ Ա^հա, յաւիտենական (19)՝ Ա^հա, յոժարական (43), մասնական (45), մնացական (43)՝ Ա^բա, պատահական (25), տեսական (47), տարրական (27), ստացական (47)՝ Ա^բա, ցանկական (43), քաղաքական (48) -ակար – վնասակար (17) -ակի - եռակի (22), ուղղակի (34)՝ Ա^հա-ային - ամառնային (35), աստուածային (46), գիճային (33)՝ Ա^հա, եթերա-

յին (26), երկրային (27)՝ Ա^հա, հարաւային (21), հիւսիսային (21), ձմեռային (35), մարդկային (37), ցամաքային (41), օդային (26)

-ան - նշան (33) Ա^հա

-անակ - եղանակ (27), փոխանակ (29), կայական (23)

-ապատիկ - բազմապատիկ (32)

Ա^հա, ութնապատիկ (24)

-ապէս - հաւասարապէս (32), նմանապէս (41), պարզապէս (46)

-արան - զանձարան (41), գործարան (43)

-աւոր - Աղեղնաւոր (23), գիսաւոր (34), եկաւոր (23), լուսաւոր (32), հե-
ռաւոր (36), մասնաւոր (42)

-եղէն - հրեղէն (21), ջրեղէն (21)՝ Ա^հա, պլօրեղէն (21) - երորդ - եօթներորդ (25), հինգերորդ (25), վեցերորդ (25)

-րորդ - երկրորդ (18), երրորդ (18), չորրորդ (24)

-իկ - մասնիկ (35)

-ին — դժուարին (21), լուսին (22), միջին (19)՝ Ա^հա, ստորին (25), վերին (25), վերջին (37)

-ութիւն — արիութիւն (78), բարկութիւն (48), բարձրութիւն (20), բազմու-
թիւն (23), բնութիւն (22), բռնութիւն (34), գեղութիւն (47), գթութիւն (48), զօ-
րութիւն (23), խնդութիւն (43), հաստատութիւն (23), նվազութիւն (36), մեծու-
թիւն (32), քաղցութիւն (36) և այլն:

-ումն — եռացումն (25)՝ Ա^բա, ընկալումն (28), իմացումն (45)՝ Ա^բա, յի-
շումն (45), շարժումն (22)

-ունդ - ծնունդ (23):

Ս. Բերիացու երկում հանդիպած մյուս վերջածանցավոր կաղապարն է՝
(Աա)ա: Կան բազում օրինակներ ածանցների ամենաբազմազան զուգորդութ-
յուններով: Զարկ է նշել, որ ինչպէս առաջնային, այնպէս էլ երկրորդային վեր-
ջածանցավոր հիմքերի դեպքում տեղի է ունենում շեշտափոխական հնչյունա-
փոխություն: Ընդ որում, հնչյունափոխված կարող է լինել և՛ հիմքը (դեռևս բա-
ռակազմական առաջին քայլի ընթացքում, օր՝ լուսին . < լուս (լոյս) + ին), և՛
առաջին ածանցը (օր՝ լուս (լոյս)+ ին > լուսին + ական > ական > լուսնական):
Մեր օրինակներում հանդիպում են երկվերջածանց բաղադրությունների
հետևյալ ենթակաղապարները՝ ա) (Ա^հա)ա - բնաւորեալ (29), բնականապէս
(21), բ) (Աա^հ)ա - ստորնային (22), ցասմնական (48), գ) (Ա^բա)ա - ընթացակա-
նութիւն (47), եռացուցիչ (36), դ) (Ա^հա^հ)ա - սննդական (38):

(Աա)ա կաղապարով զուգորդությունները հետևյալներն են.

-եցիկ + -աբար - գեղեցկաբար (45)

-աւոր + -ական - բնաւորական (37)

-ող + -ական - ածողական (39), հալողական (39), յիշողական (40), շար-
ժողական (39), կարծողական (41), կարողական (46), պահողական (39), քար-
շողական (39)

-արան + -ական - գործարանական (37)

-ուած + -ք - խառնուածք (37)

-աւոր + -ութիւն - կարգաւորութիւն (18), դասաւորութիւն (22), լուսաւո-
րութիւն (37), կրօնաւորութիւն (48)

-եցիկ + -ութիւն - գեղեցկութիւն (47)

-ստ + -ութիւն - իմաստութիւն (47)

Ինչպէս նկատուի ենք, Բերիացու երկի երկվերջածանց զուգորդություն-
ներում գերիշխողն անհնչյունափոխ հիմքն է։ Սակայն կան նաև հնչյունափոխ-
ված հիմքերով՝ բնաւորական, լուսաւորութիւն։ Սրանց ենթակաղապարն է՝
(Ա^hա)ա ։ Կան օրինակներ էլ, երբ հնչյունափոխության է ենթարկվում միայն ա-
ռաջին ածանցը՝ գեղեցկութիւն, ենթակաղապարն է՝ (Ա^hա)ա ։

[(Աա)ա]ա կաղապարով եռանդամ բաղադրությունները գրաբարում քանա-
կով զիջում են երկածանցներին։ Հանդիպել է ընդամենը 3 օրինակ.
-ան + -ակ + -ութիւն — նշանակութիւն (35)

-ին + -որդ + -ական - առաջնորդական (47)

-ունդ + -ական + -ութիւն — ծննդականութիւն (48)։

Առաջին օրինակում ունենք հնչյունափոխված արմատ՝ նշ (< նիշ). սրա
ենթակաղապարն է՝ [(Ա^hա)ա]ա։ Երկրորդ օրինակում հնչյունափոխված է Ա՝
արմատը, Ա՝ առաջին ածանցը. ենթակաղապարն է՝ [(Ա^hա^h)ա]ա։ Երրորդ օրի-
նակում հնչյունափոխված է ածանցը՝ [(Աա)^hա]ա։

Այսպիսով՝ ածանցումների զուգորդություններ պարունակող (Աա)ա,
[(Աա)ա]ա կաղապարների քննությունից պարզվում է, որ քննվող բնագրում
երկվերջածանց կազմություններում գործածված են 25 տարբեր զուգորդու-
թյուններ, իսկ եռավերջածանց կազմություններում՝ 3։ Բերիացու երկում ամե-
նաշատ կիրառություն ունեն -ութիւն (97 օրինակ), -ական (37 օրինակ),
-ագոյն (17 օրինակ), -աւոր (15 օրինակ) ածանցները։ Մյուս ածանցներով կա-
ռույցներն ավելի քիչ են։

Բայածանցները լինում են բայակերտ և բայակազմիչ։ Բայակերտ են այն
ածանցները, որոնք դրվում են բառարմատի կամ բառահիմքի վրա և կերտում
բայեր։ Գրաբարի բայակերտ ածանցներն են՝ *-ել, -իլ, -ուլ, -ալ*։ Բայակազմիչ
են բայակերտներից առաջ հանդես եկող ածանցները՝ *-ամ, -են, -ն, -չ, -նչ,*
-անչ, -աչ, -ուցան, -ատ, -ոտ, -տ։ Այսպիսով՝ բայերը բառակազմական տեսա-
կետից բաղադրյալ կազմություններ են, այսինքն՝ կազմված են առնվազն 2
ծնությունից՝ արմատից և վերջավորությունից։ Ս. Բերիացու երկում առկա բայերի

բառակազմական կաղապարները կներկայացնենք հետևյալ հիմնակաղապարներով՝ Աա(հիմք + պարզ բայակերտ ածանց-վերջավորություն), Ա^բա կամ Ա^{հբ}ա (անհնչյունափոխ կամ հնչյունափոխված հիմքերով սոսկածանցավոր և պատճառական բայեր), ա(Աա)՝ նախածանց + բայ, Ահ(Աա), Ա(Աա)՝ բառաբարդում:

Աա - բայական արմատներով կազմություններ. սրանք ժառանգված են լեզվի զարգացման նախորդ փուլերից՝ անարգել (28), գնալ (17), թողուլ (32), շարժել (22):

Ա^բա - քերականական ձևավորում ունեցող հիմքեր. այս կաղապարի մեջ են խմբավորվում սոսկածանցավոր և պատճառական բայերը՝ առնել(17), արկանել (30), անցանել (32), բարձրանալ (32), գտանել (30), դառնալ (30), ելանել (30), ընթանալ (29), թուլանալ (27), իմանալ (47), իջանել (37), հասանել (30), մարտնչել (46), մերժենալ (37), պայծառանալ (23), քերմանալ (36):

Ա^{հբ}ա -հնչյունափոխված և քերականական ձևավորում ունեցող հիմքեր՝ բազմանալ (46), դարձուցանել (41), երեւեցուցանել (41), թուլանալ (23) խաւարեցուցանել (32), խտանալ (34), ծնանել (34), կորուսանել (40), ցրտանալ (37), փախուցանել (22), լուծանել (35):

(Աա)ա - վերջածանցավոր սերող հիմքերով բայեր՝ լուսաւորել(18), տպաւորել (28):

ա(Աա), ահ(Աա) - նախածանցավոր բայեր՝ արտահոսել (34), արտափայլել (34), բացայայտիլ (25), ընդդիմանալ(43)՝ ա(Ա^{հբ}ա), համաձայնել (25), շաղկապել (18), շարագուզել (34), պարունակել (44):

Ա. Բերիացու երկում կան բարդ սերող հիմք ունեցող բայեր, ինչպես՝ դողացուցանել (36)՝ (ԱհԱ^{հբ})ա, գծագրել (34)՝ (Ա^հհԱ^հ)ա: Կան նաև այնպիսի կազմություններ, որտեղ արմատներից առաջինը ածանցավոր կազմություն է՝ կենդանացուցանել՝ [(Աա)հԱ^{հբ}]ա:

Այսպիսով՝ Բերիացու երկում գերիշխում է հիմք + բայակերտ ածանց-վերջավորություն ունեցող կաղապարը (Աա) իր ենթակաղապարներով (Ա^բա, Ա^{հբ}ա):

***Բանալի բառեր** - բաղադրյալ բառեր, վերջածանցներ, նախածանցներ, անհոդակապ բարդություններ*

Գրականություն

1. Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984:
2. Բերիացի Ա., Յաղագս աշխարհի եւ այլ մասնաւոր իրաց, Երևան, 2011:
3. Դաւրիժեցի Ա., Գիրք պատմութեանց, Երևան, 1990:

4. Հովսեփյան Լ., Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987:
5. Ղազարյան Ս., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 2006:
6. Ղազարյան Ռ., Միջին գրական հայերենի բառապաշարը, Երևան, 2001:

ABOUT THE WORD FORMATION IN SARGIS BERIATSY'S WORK "THE WORLD AND OTHER PRIVATE ELEMENTS"

N. V. PARONYAN

YSU Assistant of the Chair of Armenian Language History

Though S. Beriatsy wrote this work in the first half of the 17th century, it was written in old Armenian (grabar), Middle Armenian, as well as Early New Armenian (ashkharabar).

There are about 60 complex words in Beriatsy's work. Most of them are written together. Some of them are written separately. In the above mentioned work there are many complex word which are formed in the following ways: prefix + root; kroot + suffix; prefix + root + suffix; (root + suffix) + suffix. Suffixes are used most of all.

СЛОВСОЧЕТАНИЯ РАБОТЫ САРГИСА БЕРИАЦИ О МИРЕ И ДРУГИХ ВЕЩАХ В ЧАСТНОСТИ

Н. В. ПАРОНЯН

Ассистент кафедры истории армянского языка ЕГУ

Несмотря на то, что свою работу С. Бериаци написал в 17-ом веке, она написана на грабаре (классический армянский язык). В работе Бериаци присутствуют словосочетания и из грабара, и из среднеармянского, и из разговорного раннеармянского языков. В работе Бериаци есть около 60 составных слов. В выше упомянутой работе есть многие составные слова, которые сформированы следующими способами: префикс + корень; корень + суффикс; префикс + корень + суффикс; (корень+ суффикс) + суффикс.

Суффиксы используются больше всего.